

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

(վերահաստատված)

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԵՀՀ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ՀԲԻ-ի ուսանողների կրթական գործընթացի որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և իրավասությունը գործունեության արդյունավետությունը գնահատելու:

2. Ուսանողական հարցման անցկացումը

2.1 Ուսանողական հարցումն իրականացվում է հոկտեմբեր – նոյեմբեր և մարտ-ապիլ ամիսներին: Ավարտական կուրսերում հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ ավարտական քննությունների ավարտից հետո:

2.2 Ուսանողական հարցումն իրականացվում է ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:

2.3 Ուսանողական հարցումն իրականացվում է սույն կարգին կից հարցման թերթերով (հավելված 1.2.3.): Ուսանողական հարցումն անանում է:

2.4 Ուսանողական հարցումն անց է կացվում Որակի ապահովման կենտրոնի կողմից սահմանված և նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն դասժամերին, հոսքի /խմբի ուսանողների առնվազն երկու երրորդի մասնակցության պայմաններում, որի համար պատասխանատու են դեկանատները:

2.5 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են Որակի ապահովման կենտրոնում:

2.6 Ուսանողական հարցման արդյունքները և թերթիկները պահվում են Որակի ապահովման կենտրոնում:

2.7 Որակի ապահովման կենտրոնը ուսանողական հարցման արդյունքները ներկայացնում է համապատասխան ֆակուլտետի դեկանին և ինստիտուտի ռեկտորին:

2.8 Ֆակուլտետներ ներկայացված ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոններում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ, ուղղված դասախոսի դասավանդման կամ դեկանի աշխատանքի որակի բարելավման համար:

2.9 Ուսանողական հարցման արդյունքները քննարկում են և լուծում են ստանում ռեկտորի որոշմամբ:

2.10 Ուսանողական հարցման արդյունքները օգտագործվում են ինստիտուտում իրականացվող կրթական գործընթացի բարելավման, զարգացման և առկա թերությունների վերացման համար: